

Նուէրներու, Պատարագի եւ ողորմութիւն ընելու մասին

Աղքատներուն ընդունելութիւն ընելը շատ օգտակար է ու անոնց աղօթքները Աստուծոյ մօտ են. «Երանելի է ան, որ կը խորհի աղքատին եւ չքատրին մասին, Տէրը չար օրէն կը փրկէ զայն, երանելի կ'ընէ երկրի վրայ եւ թշնամիներուն ձեռքը չի մատներ զայն»: (Մաղմոս 41:1-3): Կարիքաւորները կերակրելու երջանկութիւնը այս է, ինչ որ Քրիստոս իրեն համար կատարուած կը նկատէ: Իսկ ի՞նչ պիտի շահիս, երբ ունեւորները խնճոյքի հրաւիրես եւ կամ ի՞նչ պիտի ըլլայ անոր օգուտը: Անօթիներուն համար եղած ընդունելութիւնը օգտակար է, իսկ կուշտերուն համար եղածը՝ ոչ. Քրիստոս չըսաւ. «Յագեցածները կշտացուցիք» ու նաեւ չըսաւ «Խմելիք տուիք անոնց, որոնք գինով էին», այլ ըսաւ. «Տեսաք անոնք, որ ծարաւ էին եւ դուք անոնց ջուր տուիք խմելու. տեսաք մերկերը ու զանոնք հագուցիք եւ օտարներուն այցելեցիք»: Նման գործերն են, որ արժանի պիտի ըլլան վարձատրութեան եւ երանութեան եւ ոչ թէ կուշտերուն եւ ունեւորներուն համար եղած կերուխումները, որովհետեւ ան որ աղքատը, կարօտեալը, օտարը, հիւանդը եւ անտունը կը կերակրէ, ոչ թէ մարդ մը, այլ Քրիստոսն է որ կ'ընդունի, Քրիստոսն է որ կը սփռուի, Քրիստոսն է որ կը մխիթարէ, Քրիստոսն է որ կը հանգչեցնէ եւ Քրիստոսն է որ կը ծառայէ,



Ի՞նչ նշանակութիւն ունի քշոցներու գործածութիւնը:

Քշոցներու գործածութիւնը կը խորհրդանշէ Աստուծոյ գահուն առջեւ թռչող Սերովբէներու, Քերովբէներու եւ երկնային զօրքերու հրճուանքն ու անոնց թելերուն ձաւնը:

Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է, խելացի են բոլոր անոնք, որոնք այդ իմաստութեամբ կ'ապրին իսկ զգօնութեան սկիզբը՝ բարեպաշտութիւնն է Աստուծոյ հանդէպ, բայց ամբարիշտները կ'անարգեն իմաստութիւնն ու խրատը: (Արակաց 1:7)

ՏՕՆԱՅՈՅՑ

13-Անուանակոչութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

14- Տօն ծննդեան սրբոյ Յովհաննու Կարապետի:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԾԱԾԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ](#) [jcrak](#) [Նրազ քեղք](#)



ՔՈՒ ԽՕՍԷԳ ԻՄ ՈՏՔԵՐՈՒՄ ՃՐԱԳ Է ՈՒ ԻՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ

(Մկ.119.105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 10 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2021 ԹԻՒ 2

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Երբ. 12.18-27:
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԿԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 1.39-56

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Չաքարիայի տունը մտնելով՝ Եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ. «Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն, եւ օրհնեա՛լ է զաւակը, որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՛նչ երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինձի կ'այցելէ. որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ք թե՛զի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ թե՛զի ըսուածները պիտի կատարուին»:

Մարիամ ըսաւ. «Տէրը պիտի գովաբանեն: Ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծով, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեգութիւնը: Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի, քանի հզօրն Աստուած ինձի համար մեծամեծ գործեր կատարեց: Սուրբ է անունը անոր: Բոլոր ժամանակներուն մէջ ան ողորմութեամբ կը նայի աստուածավախ մարդոց վրայ: Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ, ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր խորհուրդներով: Գահագրկեց արքաները եւ բարձրացուց խոնարհները: Անօթիները բարիքներով լեցուց, մինչ հարուստները՝ դատարկածեռն արձակեց: Պաշտպան եղաւ իր ծառային՝ Իսրայելի, հաւատարիմ մնալով իր ողորմութեան, ինչպէս որ խոստացած էր մեր հայրերուն՝ Աբրահամի եւ անոր զաւակներուն»:

Մտոհամ Եղիսաբէթի մօտ շուրջ ետեք ամիս մնալէ ետք մեռաւ առձայն հո տունը:

ԱՌԱԿ ԳԼՈՒԽ ԺԵ 10-12

Բարի մարդուն խրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը: Անուղղայ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր զհտանհա մատուն հետ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆ

Ս. Ծննդեան ութերորդ օրը Յիսուս Քրիստոսի անուանակոչության տօնն է: Համաձայն Գաբրիել հրեշտակապետի պատգամին, որ տեղի ունեցավ Աետումին օրը, Յովսեփ եւ Մարիամ նորածին Յիսուսը տարին տաճար, հրեական օրենքի համաձայն, թվատել տուին եւ անունն ալ դրին Յիսուս:

Յիսուս անունը կը նշանակէ Փրկիչ, իսկ Քրիստոս՝ Օծեալ Տէր: Յիսուսի տրուած միւս անուններն են՝ Մեսիա, Քրիստոս, Էմմանուէլ, Փրկիչ, Մեծ Վարդապետ. ատարաններուն մէջ կը գործածուի նաեւ «Մարդու Որդին»:

Հրեաներու մօտ սովորութիւն էր արու զաւակները թվատելը, որպէսզի անոնք ստանան Աբրահամեան սերունդի եւ աստուածային ուխտի կնիքը: Նոյն միջոցին կը կատարուէր, նաեւ անոնց անուանակոչումը՝ անուն դնելը: Թվատումը՝ հրեաներու համար Եհովայի եւ Աբրահամի միջեւ կնքուած «դաշինքի» յիշատակն է:

Քրիստոնէութեան տարածման սկզբնական շրջանին, նորադարձ հրեայ քրիստոնէաները կը շարունակէին պահել այդ սովորութիւնը, բայց Պօղոս առաքեալ արգիլեց:

Յիսուսի թվատութիւնը, ոչ թէ անհրաժեշտութեան, այլ՝ հաստատուած օրենքը յարգելու եւ կատարելու համար էր:

Հայ եկեղեցին, անուանակոչութեան տօնը կը կատարէ Յունուար 13-ին՝ որպէս անշարժ տօն, իսկ կաթոլիկ եկեղեցին՝ Յունուար 1-ին:

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ

Յովհաննէս Կարապետը Յիսուս Քրիստոսի գալուստը վկայած մարգարէներէն վերջինն է, որ յետագային նաեւ մկրտեց զԱյն այնուհետեւ կոչուելով «Յովհաննէս Սկրտիչ»: Ան մեծ համբաւ ունէր իր ապաշխարհութեան քարոզչութեամբ եւ իրեն հետեւորդներու մկրտութեամբ: Իր հանդէպ յարգանքը այնքան մեծ եղած է, որ իր հետեւորդները հարց կու տային թէ արդեօք ի՞նքն էր Քրիստոսը:

Հայաստանեայց առաքելական եկեղեցին Յովհաննէս Կարապետի յիշատակը կը նշէ չորս առիթներով, որոնցմէ երկուքն են՝ ծնունդը եւ գիտատոյժը:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԵԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞նչ կը խորհրդանշէ Ողջոյնը պատարագի ընթացքին:

Ողջոյնը առաջին հերթին խաղաղութեան եւ սիրոյ խորհրդանիշ մըն է, որով հաւատացեալները կը միանան Քրիստոսի, նաեւ իրարու, հետեւելով Պօղոս Առաքեալի պատուիրին, որ կ'ըսէ. «Սուրբ համբոյրով ողջոյն տուէ՛ք իրարու» (Բ. Կորնթացիս 13.12):

Ողջոյնին իմաստը հաւատացեալներու միութիւնն է, եղբայրական հարազատ սիրով եւ ոգիով, առանց մէկը միւսէն խռոված ըլլալու: Անոնք կ'ողջագուրուին իրարու հետ՝ որպէս բարեկամներ՝ առանց բարկութեան, նեղութեան, տարակարծութեան կամ ատելութեան: Այս բոլորը, Քրիստոսի պատուիրին համաձայն՝ երբ ան կը թելադրէ. «Եթէ զոհարանին վրայ, ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես՝ որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ զոհարանին առջեւ, գնա՛, նախ հաշտուէ՛ եղբօրդ հետ եւ ապա, եկու՛ր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ՛»:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

Մեր հայեացքները դէպի երկինք սեւեռենք

«Բեզի՛ կը բարձրացնեմ իմ աչքերս, ո՛վ երկինքի մէջ Բնակող» (Խւ. 123.1): Բազմաթիւ նեղութիւններու մէջ ինկած եւ սակայն հայեացքը Աստուծոյ սեւեռած մարդու մը խօսքն է այս խօսքը: Քրիստոնէայ մարդը պէտք չէ մոռնայ, որ ինք ունի երկնաւոր Փրկիչ մը, որ իբրեւ «բոլոր երկրի Դատաւորը» (Ծն. 19.25), կը նստի բոլոր երկինքներէն վեր եւ նկատի կ'առնէ այն բոլոր նեղութիւնները որոնց կը հանդիպին իր զաւակները: Նեղութեանց մէջ ըլլանք թէ ոչ, պէտք է սորվինք մեր հայեացքները ուղղել դէպի երկինք: Երկիր երկինքին հովանաւորութիւնն ու առաջնորդութիւնն է, որ կը վայելէ, ուստի ո՛վ երկիր ու ո՛վ երկրաւորներ, երկինք նայեցէք:

Վա՛յ անոնց որոնք ուղիղ ճանապարհը թողած՝ խաւար ճամբաներէ կը քալեն, որոնք կ'ուրախանան չարիք գործելով եւ կը խնդան դէպի չարը խտորելով: Առակ 1

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

Երբ զիշերը հանգիստ քուն կը փնտռես, քնանալէ առաջ կարդա՛

Բեզ կը կանչեմ, պատասխան տուր, ո՛վ Աստուած, դո՛ւն ես արդարութիւնս պաշտպանողը, նեղութեանս մէջ դո՛ւն զիս հանգստացուցիր. ողորմէ՛ ինձի, լսէ՛ աղօթքս:

Ո՛վ մարդիկ, մինչեւ ե՛րբ զիս պիտի անարգէք. ինչո՞ւ դատարկութիւնը կը սիրէք եւ ստութեամբ կը զբաղիք: Գիտցէք, թէ ՏԵՐԸ բացառիկ վերաբերում ցոյց տուաւ ինձի, որ հաւատարիմ եղայ իրեն, եւ պիտի լսէ զիս, երբ օգնութեան կանչեմ զինք: Աստուծմէ վախցէք եւ մի՛ մեղանչէք. երբ անկողին կը մտնէք՝ այս մասին մտածեցէ՛ք, եւ լռեցէ՛ք: Չեր մեղքերէն արդարանալու համար՝ զոհեր մատուցանեցէք, եւ ՏԻՐՈՋ վստահեցէք:

Շատեր կ'ըսեն. «Ո՛հ, բարիքներովդ մեզ լիացուր, ՏԵՐ շնորհքներդ առատացո՛ւր մեր վրայ»:

Բայց դուն սրտիս շատ ատելի ուրախութիւն պարգեւեցիր, քան անոնք կրնան գտնել՝ ցորենի, գինիի եւ ձեթի առատութեան մէջ:

Խաղաղութեամբ կը պատկիմ ու կը քնանամ, որովհետեւ , ՏԵՐ, միայն դո՛ւն ապահովութիւն կուտաս ինձի: